

պատմաբանք կը պարտաւորին կոտորածներն յիշելով ըսել թէ՛ «Ոչ մնաց ի թագաւորութեանն այր խորհրդական, զի միահամուռ սպառնեցան բնակիչք աշխարհին եւ իշխանին»: Նամակը կ'իմացներ նաեւ հայ իշխանաց մէջ Գրիգոր Մագիստրոսի եւ Մանուէլի եւ Մարդունիի մահը, որ աներ էր Բագրատունի Ասպետին եղբօր, եւ կը յորդորէր գթեողորոս ժամ առաջ հասնիլ, որպէսզի կասկածոտ կայսեր միտքը չի կատղեցնէ իւր ընտանեաց վրայ:— Ծեր Ստրատելատը իւր ընթերցմունքը լմնցնելէն վերջ՝ ամէն բան իմացուց Ռշտունունջն եւ իւր վերջին հրաժարականը տուաւ իմացնելով, որ այլեւս յոյս չունէր ուրիշ տեսութեան. Զայոց զօրավարը Դուինի ճամփան բռնեց, երբ Երիզագին կ'երթար դէպի Պոնտոս մտնելու նաև՝ դառնալու Պոչիս, ուր հիւանդ հազիւ հասնելով, բնական մահն եկաւ ու Կոստանդինի ձեռքէն զինքն ազատեց:

Թեոդորոս Ռշտունի այս անակնունելի դիպուածոց վրայ դառնացեալ, այլ ոչ երբեք սրտաբեկ, երբ հասաւ Դուին, միտքը դրած էր երկրին կարեւոր գործերն կարգի դնել, եւ դառնալ Ռշտունիք, վասնզի Տիկինը սուրհանդակ սուրհանդակի վրայ կ'ուղարկէր եւ անհամբեր էր դարձին, «զի ընտանեկան պարագայներ կային, որ իւր «գալուստը կը պահանջէին եւ որ նամակաւ դժուար էր իմացնել»:

Բայց հազիւ երկրին մատակարարութեան գործերը կարգի դրաւ Ներսէս կաթողիկոսի, Սմբատ Կիւրապաղատի եւ քանի մը ուրիշ իշխանաց հետ, ահա հրովարտակ կը բերէր Յունաց կայսրէն Դաւիթ անուն մարդ մը աստուածաբանական ուսմանց տեղեակ՝ բաղարանցի, որ կը հրամայէր վերցնել ամէն խտիր եւ միաբանիլ յունաց հետ ի դաւանութիւնս: Ուստի կաթողիկոս եւ նախարարք պարտաւորեցան հրաւեր յուղարկել ամէն կողմ, եւ իշխանք եւ եպիսկոպոսք զանազան գաւառաց ժողուեցան ի մայրաքաղաքն Դուին, եւ ամիսներով կը վիճէին, կը խոսէին հրովարտակին պատասխանը պատրաստելու համար:

Կային հայ նախարարաց մէջ այնպիսի անձինք նաեւ, ինչպէս էր Զամազասպ Մամիկոնեան, տեղեակ աստուածաբանական խընդրոց, որ եպիսկոպոսաց հետ կը խառնուէին վիճաբանութեանց եւ գործը կ'երկարէր: Իսկ Թեոդորոս, որ ամենեւին չէր խոսէր՝ այլ տիտուր, ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, երբ իր կարծիքը հարցուցին օր մը, այսպէս խօսեցաւ.

«Աստից գրեթէ տասնհինգ կամ տասնվեց տարի առաջ, Կարնոյ քաղաք, Զերակլ կայսեր հրամանաւ ժողովք մը եղաւ. Եզր կաթողիկոսի հետ ես դարձեալ այս նիւթերու վրայ տեսայ, որ խորհրդածութիւնք, վիճաբանութիւնք տեղի ունեցան. վիճեցին, խօսեցան, ճառեցին. եւ հետեւանքը այն եղաւ, որ